## ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

# ԿՈՄԻՏԱՍԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

*Այդ օրը Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնի դռները բացվեցին Կոմիտասի համար։ Մի տարուց ավելի այստեղ ոչ մի միջոցառում չկազմակերպվեց։ Թատրոնի դռները շարունակ փակ էին։ Եվ ահա քաղաքի հասարակայնությունը հավաքվեց նշելու անմահ Կոմիտասի հոբելյանը։*

Դանլիները լեփ-լեցուն էր: Այստեղ կային կուսակցական, խորհրդային ղեկավար աշխատողներ, Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահության անդամներ. Արցախյան թեմի առաջնորդ, գերաշնորհ Տ. Գարգև սրբազան Մարտիրոսյանը՝ թեմի մի խումբ հոգևորականներով, քաղաքի աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչներ:

Լեռնային Ղարաբաղի երգահանների միության կազմակերպության նախագահ, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրեն էդվարդ Ղազարյանցը հակիրճ խոսք ասաց Կոմիտասի մասին, այն զուգակցելով այսօրվա արցախյան շարժման հետ:

Դանլիհում ղողանջում են եկեղեցական զանգերը, դանդաղ բացվում է վարագույրը: Վարագույրի բացման հետ հանգչում են դանլիհի լույսերը: Բեմում մոմերի լույսի տակ եկեղեցական կամարն է, իսկ վերևում՝ Կոմիտասի մեծադիր դիմանկարը: Թատերականացված պատկերներով, Կոմիտասի կյանքն ամփոփող տեքստով, կոմիտասյան երգով, մեղեդիներով ընթացավ երեկոն: Հնչում էր Կոմիտասի երգը՝ Կոմիտասի կատարմամբ: Այնուհետև հանդես եկան Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի ուսուցիչներ, դաշնակահար Դերենիկ Մելքումյանը, երգչուհի Լուսինե Աղաջանյանը, բառահար Լևոն Սարգսյանը, Հայֆիլհարմոնիայի մենակատարուհի Թամար Հարությունյանը և ուրիշներ: Երեկոն եզրափակեց Արցախյան թեմի «Դանձասար» երգչախումբը, որ կատարեց կոմիտասյան պատարագներ:

**Լ. ՄԿՐՏՉՅԱՆ**
**(Մեր սեփ. թղթ.)**